



ԱՄԱՆՈՐԸ ՄԱՅՐ ԱԹ-ՈՒ-ՈՒՄ

Ահա ավարտին է մոտենում ևս մեկ փարի: Ախտոսանքով, թե ուրախությամբ հրաժեշտ ենք փալիս արդեն իին փարվան և հոյսով ու յավագետությամբ մուզք գործում նոր՝ 2003 թվական: Կանգնած ենք իին փարվա վերջին և նորի սկզբին: Մի իրադարձություն, որ յուրաքանչյուր բանական մարդու խորհեղու և միորեղու առիթ է փալիս: Ամեն մենքս ականա միտովի հայում ենք թե՛ 2002 թվականում և թե՛ ընդհանրապես մեր ապրած կյանքում անհա տական թե՛ հավաքական առումով հաջողված կամ ընդհակառակը՝ ծախողված ձեռնար կումներին կամ իրադարձություններին: Մի պահ, եթե մարդ հաշվետու է լինում իր և Ասդո առաջ, ցավով է լցվում թերացումների համար և հայում Տիրոջ օգնականությունը՝ ապա գայի հանդիպ ունեցած հոյսերի և փեսիլքների իրականացման գործում:

Մայր Վեռո Ս. Էջմիածնի միաբանությունն ու պաշտոննեությունը, Ս. Էջմիածնի հոգևոր կրթօջախների ուսանողությունը, նախազահությամբ Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Բ Կաթողիկոսի, ինչպես միշտ ոնկվեմքերի 31-ի երեկոյան հավաքվել էր ավանդական դարձած սիրո սեղանի շորջ՝ հրաժեշտ փալու անցնող փարվան և նոր իդերով ու ցանկություններով Վեհափառ Հայրապետի օրինությամբ թևակիրխերու 2003 թվական: Առ Բարձր յալը հղված Տեղունական աղոթքով և Հայաստանի Հանրապետության հիմնով ու Գյորգյան Հոգևոր Ծեմարանի քայլերգով սկսվեց ամանորյա հանդիսությունը:

Ամանորյա երեկոն փարեմուսի իր խոսքով բացեց Գյորգյան Հոգևոր Ծեմարանի փեսուչ Արժանապատիվ Տ. Եղիշե ավ. քին. Սարգսյանը՝ ասելով.

«Մի քանի ժամից 2002 թվականը կդառնա պատմություն: Եթե ընդունենք, որ պատմությունը փաստերի, կադրարած-չկարարած գործերի արձանագրումն է՝ ուրիշ յույլ գովեր փարեմուսի այս երեկոյին եկաղարձ մի հայացք նետել անցնող դարվա պատմությանը:»

2002 թվականը Վեհափառությանդ ղեկավարությամբ Մայր Աթոռի, Հայոց Եկեղեցու և Գյորգյան Հոգևոր Ծեմարանի համար եղավ արդյունաշատ: 2002 թվականին էր, որ Սրբությանդ ջանքերով Գյորգյան Հոգևոր Ծեմարանը Ռ Կատովարության որոշմամբ ճանաչվեց որպես ասպարագանական համալսարան: Կադրարվեց նաև ակադեմիկոս նորակառուց և նորոգված մի շարք եկեղեցիների: Դունձքը Գյորգյան Հոգևոր Ծեմարանում եղավ առար: Ավարտանառերի պաշտ պանությամբ շրջանավարդ մի խունք սաներ կցան լրացնելու Մայր Աթոռի միա բանության շարքերը: Իրար եղանից հիմնովին նորոգվում և նոր դեմք են ստա

նույն Մայր Աթոռող բողոք շինուագումները: Ներքը հասել է Գնորզան Տոգեր ճեմարանի մասնաշենքի հիմնական նորոգմանը:

Սրբության առաջնորդությամբ և ամենօրյա հետքեղական աշխարհանքի արդյունքում Մայր Աթոռի միաբանության շարքերը վերջին երկու տարիների ընթացքում համարվում են երիտասարդ, խոսքումնալից ու Մահակ-Մեսրոպյան օրինյալ ժամանակների օրինակով եվրոպական զանազան հասկարություններում իրենց ուսումը և լեզուների խնացությունն ավելի կարարյալ դարձնող սաներով, որոնք վերադառնալու են Մայր Աթոռ և իրենց նվիրումով, ծառայությամբ օգտակար լինելու երկիազարայիս մեր Ս. Եկեղեցուն: Ո՞վ կարող է հիշել և հասկարել, թե երբ են Մայր Աթոռում այսքան ձեռնադրություններ եղել, որոնց թիվն այսօր անցնում է իրենց դասնայակից: Ականայից հիշողությունն զնում է 17-րդ դարի սկզբը, երբ Մովսես Կարողիկոսին հաջորդում են Փիլիպոս Աղքակեցի, Հակոբ Զուղայեցի Հայրապետները: Նրանց ժամանակների համար էր Չափիք Բաղդեցին գրում «Ի մերում ժամանակին կրկին Լուսատորիք եղեն Ամենայն Հայոց, զի ժամանակու սոցա աջօք մերով տեսանենք զՍուրբ Հջմիածին անթի վարդապետը և արեդայք և խարազանազեստը կրօնատոք, անի քան իրնագիտիր»:

Ժողովուրդների և նոյնիսկ հասկարությունների պարմությունն ունի պեղականության և մակրնեացության շրջաններ: Հայոց Եկեղեցին նոյնական մեր ողջ պարմության ընթացքում ունեցել է վերընթացներ, դժբախարար նաև դժվարին շրջաններ:

Փառք Արարջին, որ Զերդ Սրբության Հայրապետության շրջանում ակսվել է մեր Ս. Եկեղեցու, Հայոց Հայրապետության վերելքի մի նոր շրջան: Ճեմարանի հանդեպ Զերդ Սրբության նպատակաւաց ուշադրությունը համոզում են բոլորին, որ ապագայում, երբ պատրնություն կդառնան Վեհափառության գործունեությունը, ժամանակի պարմագիրը միանշանակ պիտի հասկարել և գրի, որ ի Հայրապետության S. S. Գարեգին Երկրորդ շինարար մեծագործ Հայրապետի Ս. Հջմիածնուն հավագրով և գիրությամբ զինված շնորհալի վեղարավորների մի սրբար բանակ կար:

Վեհափառ Տեր, կանգնած ենք անցնող և գալիք՝ 2003 հորեւյանական տարվա շեմին: Թույլ պվեք տարեմուտի այս երեկոյին բողոք ներկաների, ինչու չէ՝ նաև մեր ողջ ժողովուրդի անոնից շնորհավորներ Զերդ Սրբությանը, քանզի Զերդ երջանկահշարակ նախորդների Հջմիածնապաշտությունը, Հայրենապաշտությունը և ինաւագությունը Զերդ հոգուն և գիրակցության մեջ ունենալով, առաջնորդում եք մեր Ս. Եկեղեցին և ժողովուրդը Հայրենիքում և Սփյուռքում՝ մի անգամ ևս հասկարենով, որ «ի վերա Աշոյն և Ս. Հջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կայ»:

Ուրեմն, թույլ պվեք հոգնեայս բաժակ բարձրացնել հանուն Գնորզան Տոգեր ճեմարանի դասախոսների, սաների և այսուել ներկա եղողների, ջերմագինն շնորհավորներ Սրբությանդ գալիք Ամանորը և Սուրբ Ծննդյան նվիրական դուռը՝ մաշթելով քաջառողջություն և երջանիկ Հովհանքեպություն ի փառ և ի շինություն երկիազարայիս մեր Ս. Եկեղեցու»:

Արժանապարփիվ Տեր Խոսքից հետո, հանուն միաբանության, բարեմաղթանքի շնորհավորական սրբի խոսք ասաց Ս. Էջմիածնի ավագազոյն հոգևորականներից Երևանի պետական համալսարանի Ասդրվաճառական ֆակուլտետի դեկան Տ. Շահե արքեպոս Աճեմյանը.

«Վեհափառ Հայրապետ Ամենայն Շայոց»

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության, Գևորգյան Ռոգևոր Ծեմարանի ու սոցքական կազմի և ուսանողության անունով, Ս. Աթոռու պաշտոնյաներու և ծառայողներու անունով կշնորհավորենք Ձերդ Սրբության Ամանորք՝ սրբե մատուցություն, որ նոր սկսող դրահին արձանագրեն Ձեր կյանքին մեջ և որ հաղթանակներ, փառավոր հաջողություններ և եկեղեցաշն իրազորումներ:

Մենք փառք կուտանք Ամենակալ Աստվծոծ, որ վերջացող այս դրահին եղավ փառավոր դրահի մը, որոյ ընթացքին Ձերդ Սրբությունը Մայր Աթոռ հրավիրեց և շրջապատվեցավ ազգանվեր ու բարեկաչը բարեկարներով, որոնք Ձեր երազներուն մարտին դվին և ոխտանվեր իրենց կյանքը ճնշացուցին բարեզործությամբ:

Ինչպես անցնող դրահիներուն, այս դրահի ևս, իրոն հովիկ բարի, Ձերդ Սրբությունը այց գնաց իր հոդին մինչև ծայրագոյն Արևելք, «ճանչցա զիւր և ճանաչեցա յիւրոցն»:

Հայաստանի կրթության դաշտին մեջ Ձերդ Սրբությունը մաքրեց մեր դպրոցները անաստվածության վերջին աղբերեն և հաջողեցավ Նայ Առաքելական Եկեղեցի դարավոր իմաստության, ասդրվածուն պատգամին և սիրո ոգին առօք բանալ հայ մանուկներուն սիրուերուն դոները:

Արարադյան Հայրապետական թեմի առաջնորդական պատրաստիանադպության օրերուն ձեռնարկված Հայորդյաց լրուները Կաթողիկոսական Ձեր հոգածության շնորհիկ մեծցան, ծաղկեցան և մանուկներու նոր սերունդ մը կրթեցին, որ ծծեց Քրիստոսաշունչ հայ մշակույթի կայթ և դարձավ մեծ խոսքում՝ պատկերվ ազգայինն ու եկեղեցականը ամեն հայ հոգին մեջ:

Իսկ Մայր Աթոռուն ներս Գևորգյան Ռոգևոր Ծեմարանը ճանչցվեցավ բարձրագոյն ուսման կրթական հաստատություն մը՝ չորս մասնագիրական ամբիոններով:

Քոյոյ Եկեղեցիներուն հետ Ձերդ Վեհափառությունը սերդացոց և ճնշացուց կապերը՝ առաքելով միջնակեղեցական կամ Եկեղեցիներու կողմէ կազմակերպված միջազգային ժողովներուն Ձեր ներկայացուցիչները և պատգամները:

Ձեր մեծ նախորդներուն նման, ինչպես Զաքարիան և Սիմեոն եղջանկահիշատակ Կաթողիկոսները, Դուք նոր կյանք դվինք Ս. Էջմիածնի դրահանին, հրապարակությունները ճնշացան հայագիրական, եկեղեցագիրական, կրոնագիրական և պատմագիրական հիմնալի հրապարակություններով, որոնք ուրախացուցին Ակադեմիան իր ինստիտուտներով, Համալսարանն իր ֆակուլտետներով և Մայր Աթոռու իր թեմներով:

Այս տարի Զերդ Սորությունը շարունակեց շինարարությունը Մայր Աթոռի սահմաններուն մեջ՝ հիմք դնելով մեծ կառուցիչն, որ պիտի ըլլա միաբանության նոր թաղամասը: Դուք նախաձեռնեցիք հայագիտական աշխատանքի նոր կենտրոնի մը և հիմնարկեքին, զոր նվիրեցիք Զեր երշանկահիշարսակ նախորդի հիշարակին:

Հեհափառ Շայրապետ Ամենայն Տայոց,

Կաղործնք մեր հայրենու Ասպրություն, որ ծաղկեց Զեր գորության գավազանը, որ երկար տարիներ շարունակեք անբացնել Մայր Աթոռը, որպեսզի անոր ճանաչումով լուսավորվի մեր ժողովուրդին քրիստոնյա հավատքը և ան՝ հոր և հովի հատացանա դեպի հավիտենական հոյսը»:

Սրբազն Հոր սրբարուիս խոսքից հետո ճեմարանականների կարարմամբ հնչեց Զօրորիմյաց հոգինոյց «Ով զարմանալի» շարականը: Այսուհետու դասախոսության անունից շնորհավորական խոսք ասաց հոգևոր կրթօջախների սիրված դասախոս, պրոֆեսոր Ռողոս Խաչարյանը.

Դաշված ժամեր ու րոպեներ անց կվերջավորվի հին տարին և ծնունդ կառնի նոր՝ 2003 թվականը, որ ակնկալիքով և տենչանքով է լորեկ երազող հոգիները, ասև դիրությամբ ու ապաշավանքով՝ կողուստների ու չարվածի համար: Բայց, մանավանդ, ուրախությունն ու սպասումն են թևածուն մեր սրբերում, որովհետք անցրայի հետ բաժանման ցամքից ավելի բերկրավի է նորի հետ հանդիպումը:

Մինչ կակավի նոր տարին՝ խոհական մարդն ինքնարերարար ներտուազում և դրվում է այն զաղափարին, թե ինչ պետք 2002 թվականը: Երկրի համար թող այդ հաշվեկշիռը կաղաքներ վիճակագիրները, դնուեսության ու քաղաքականության բնագավառի մարդիկ: Իսկ ինչ վերաբերում է հայ հոգևոր եկեղեցական կյանքին, մենք ի զորու ենք դիմել և արձանագրել մի շարք հաջողություններ:

Ամենից առաջ կուգենայի ընդգծել այն դերը, որ անցնող տարում կաղաքներ է Մայր Աթոռը: Ավելի ու ավելի է զգացվում Եկեղեցու կենարար շունչը, որ տարածվում է ողջ Դանրապետության վրա և նպաստում մեր նորանկախ երկրի պետականության ամրապնդմանը: Ծավալվել է եկեղեցաշինության գործը՝ հետզհետք ընդգրկելով նաև Դանրապետության մոռացված ծայրամասերը՝ Ասրծո խոսքին զանխու մնացած զուտերը: Այդ շարժումն իր հերքագա ընթացքի մեջ, անշուշտ, կօժանդակի մեր ժողովուրդի մոլորդակ զավակներին՝ գիրակցարար եւդ կանգնելու օդարամուր անկոչ աղանդավորներից և հոգով ու հավատով կապվելու Տայոց Առաքելական Եկեղեցու՝ դարերով վավերացված ու սրբազործված դավանանքներին: Սուրբ Էջմիածինն այդ անխորդու ու անսպերդու ճանապարհի ջահակիրն է՝ Ամենայն Տայոց Ազգունդիր Կաթողիկոս՝ անխոնց Գարեգին Երկրորդ Վեհափառ Շայրապետի առաջնորդությամբ:

Մեզ զարմացնում ու հիացնումք է պարմառում Վեհափառի լայնամասշտաբ և հեղուղական գործունեությունը, որ ծավալվում է ոչ միայն Մայր Դայրենիքում, այլև իր ծիրի մեջ է առել ի սկզբու աշխարհի ցրված հացությանը:

Մենք՝ դասախոսներս, Վեհափառին և Էջմիածնի միաբանության առնչվում ենք հայրկապես Գևորգյան Տոգենոր Ծեմարանով և Վազգենյան Դպրանոցով: Չեմ կարող չընդգծել այն անդադրում, ինքանու վերաբերմունքը, որ Տայոց Դայրապետը դրսերում է կրթական գործունեության նկարմամբ: Ինչպես է հաջողություն իր բազմազրադա ժամանակից օրեր ու ժամեր հայրկացնել և գործնական մասնակցություն բերել Ս. Էջմիածնի ուսումնական օջախների ներքին կյանքին: Այդ սապարնում էական խնդիրներ առաջադրողը և նրանց լուծման հարմար դադրքական են առաջարկող Վեհափառն ինքն է՝ միշտ ունկնդիր նաև լրեւության ու դասախոսների ձայնին:

Դիմա Տոգենոր Ծեմարանը կանգնած է զարգացման նոր հեռանկարի առաջ Դաներապետության կրթության և զինության նախարարությունը հոգենոր այս հասրապետությանը շնորհել է համալսարանի կարգավիճակ: Դա անշափ պարուսավորեցնող է, միաժամանակ ճանաչումն է Գևորգյան Տոգենոր Ծեմարանի շրջանավարդների կրթական բարձր որակի: Նոր կարգավիճակն ինքնին պահանջ է դնում առանց կորուկ փոփոխությունների լրացնել, ճշգրիտ ու բարեկավել դասավանդվող առարկաների ցանկը, վերանայել ուսումնական ծրագրերը, վերակառուցմել ու համալսարանական արդի պահանջներն այնպես ներառնել, որ նրանք ոչ թե հակադրվեն, այլ ներդիսավեն ու հարստացնեն Ծեմարանի փառապանծ անցրադա ավանդները: Դանոզված ենք՝ զայլիք առաջընթացին ուղղված այս փորձությունը Ծեմարան-Համալսարանը հաջողությամբ կհաղթահարի:

Այդ ուղին պարուսավորեցնող է ոչ միայն դասախոսներին, այլև ներ սաներին: Բայց պաշտոնակիցների անունից կցանկանայի, որ նրանք չինայեն իրենց ժամանակն ու ընդունակությունները, Տայ Եկեղեցու ապագա նվիրյալի խորհրդով յուրացնեն զիմենիքների այն մեծ պաշտառը, որը նրանց կուրածների մուտքավոր պապշան մակարդակով հոգենոր գործիքները: Դասախոսներս մեզ մեծապես վարձապերված ենք զգում՝ ականատեսը լինելով մեր նախկին սաների հաջողություններին: Ինչպես ու տրահանաս, երբ մեր ազքի առաջ նրանք արժանիորեն հոգենոր ծառայությանն են նվիրյալու, հեղուղեկներ ճանաչելի դառնում ու գնահատվում իրենց գործի մեջ:

Ծնորհավոր Նոր դարի և Սուրբ Ծննդեղ, երկա՞ր, երկա՞ր շատրան կյանք Վեհափառ Դայրապետին, իսկ Զեզ բողոքիդ՝ հաջողություններ և երջանկություն»:

Այսուհետև Գևորգյան Տոգենոր Ծեմարանի ուսանողության անունից Ամանորի առիթով շնորհավորանքի խոսք ասաց Գլամբանի սան Էդվարդ դայիր Խաչարյանը:

«Վեհափառ Տեր,

Գերաշնորի Սրբազն Հայրեր, Շոգէնորի և Արժանապարիվ Հայրեր, Բարեցնորի սարկավագներ, հարգելի դասախոսներ, սիրելի ճեմարանական եղբայրներ և հարգարժան իյուրեր.

Այսօր մեկ անգամ ևս Ամանորի և Քրիստոսի հրաշափառ Սուրբ Ծննդյան տոների խորհրդուն իր վրա է բնեուում քրիստոնյան աշխարհի և ողջ մարդկության հայացքները:

Այսօր մեկ անգամ ևս, երբ ապրում ենք Ամանորի տոնական խորհրդով և սրբի ուրախ դրույթով սպասում ենք ժամ առ ժամ մուրեցող Քրիստոսի հրաշափառ Ծննդյանն ու Նրա հոգենորոգ խորհրդին, ի մի ենք եկել իրքն զավակները Զերդ Սրբության՝ մեր հոգու և սրբի որդիական ջերմ, անկնջ շնորհավորանքները Զերդ Չեզ ընծայելու:

Վեհափառ Տեր, այսօր, հավաքված Ամանորի ավանդական այս սեղանի շորջ, նոր հոյսերով, նոր երազներով, գալիքի նկատմամբ վառ և անքնիկանիկ հավաքով ենք դիմավորում սպասվող նոր դարին, հավայր, որ մեզ է փոխանցվում Զեզանից՝ մեր շնորհազարդ Հայրապետից, մեր ավագ հոգենոր հայրերից և եղբայրներից, մեր սիրելի ու սնուցող Դոգնոր ճեմարանից և նրա դասախոսական կազմից:

Այսօր մեզ՝ ճեմարանի սաներին, մեծ պատիվ է վիճակվել Վեհափառ Տերոց և մյուս հարգարժան ներկաների հետ մի հարլի ներօտ հրաժեշտ գրա 2002 թ. և սպանալ Զերդ Սրբության Ամանորյան բարեմադրանքը: Այս հոգեհարազարդ մթնոլորդը մեկ անգամ ևս պարտավորեցնում է մեզ անմենացորդ նվիրվել Հայապանայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն:

Վեհափառ Տեր, իրքն Զերդ Սրբության հոգեզավակներ ու Զերդ Հայրապետական շրջանի առաջն սաներ, մենք մեր պարտքն ենք համարում զինվորագրվել Զերդ Վեհափառության պարզաբներին և անսակարկ և ինքնամուտաց նվիրությով լծակից և համեստ օգնականները լինել Զեզ՝ մեր Եկեղեցու առաքելության իրականացնան համար Զեր բոլոր ձեռնարկներին, իսկ դրա համար մեզ այսօր հարկավոր է ուսանել, ուսանել և դարձյալ ուսանել որպեսզի արժանավոր զավակները դառնանք Զերդ Վեհափառության և ծառաները հավիրենական ճշմարդության»:

Ապա ներկաներին բարեմադրանքի իր խոսքն ուղղեց Գուգարաց թեմի առաջնորդ S. Սեպուհ Եպոս. Չուջյանը, Եփաղարձ մի հայաց ներելով թե՛ այս և թե՛ նախորդ դարիններին, Սրբազն Հայրն ի մասնավորի ասաց.

Իրավամբ հաշվեկվության օր է այսօր, յորաքանչյուր դարվա ավարտին Հայոց Հայրապետի շորջ համախմբած փորձում ենք գնահատական գրա անցյալի մեր գործունեությանը և հաջորդ դարվա համար ու գալիք դարվա համար բարեմադրություններ անել: Ճար գիշեցիկ է և հիասքանչ երբ սիրո սեղանի շորջ դռնում ենք այս օրը և լսում այն գեղնցիկ խոսքերը, որ այսօր իրար կմադրենք: Այս

ամենը շատ լավ է ու բարի, սակայն մենք բոլորս ել գիտակցում ենք, թե անցնող դարձներին ինչ չենք արել և ինչ պետք է անենք այսօր:

Յուրաքանչյուրս գիրենք, թե ինչ մարդարավերներ կան ներված նայ Եկեղեցու առջև, աթեկզմին հաջորդող դարձեր գաղափարներով Նայատանը լցվել է օգտարածին ու օգտարամուլ ուժերով, և մենք հայ Եկեղեցականներով պարզավոր ենք դիմակայել, պայքարել ու կարողանալ հայոցահարել և մեր ուղարկարությամբ մենք պետք է կարողանանք հայ ժողովրդի միասնականությունը, ամբողջականությունը ապահովել: Սա մեր յուրաքանչյուրին պարզը է, մենք պարզավոր ենք գեթ դժվարությամբ, բայց հասկարուն քայլերով ընթանալ դեպի առաջ:

«Այ Եկեղեցին, ինչպես ձեզանից շատերն ասացին, այն սրբություն սրբոցն է Ս. Էջմիածնով. Ամենայն Նայոց Նայրապետով, որ իրավունք չունի հանդուրժելու այն ուժերին, որոնք հայ ժողովրդի միասնականությունը սահանում և մեր ազգային դիմագիծը իամբարում են: Ուստի մեր պարտքն է համախմբված թե հոգևորական, թե աշխարհական, թե քաղաքական գործիք և թե մորավորականներ, ձեռք ձեռքի դրված տեր կանգնենք մեր ազգային արժեքներին: Այս է հրամայականը 2003 թվականի»:

Երեկոյի ուրախությունը բազմապարկվեց կաղանդչերի ուրախ կարակներով և շահումների ավանդական վիճակահանությամբ:

Ամանորի ուրախ և հոգելից խոսքերով զարդարված հանդիսության մասնակիցներն անհամբերությամբ էին սպասում Նորին Սրբության Նայրապետական պարզամին ու շնորհավորանքներին, և որ գալիք նոր դարին իրենց համար սկսվի մեր երանելի Քահանայապետներից եկող հայրապետական օրինությամբ և հանդիսության վերջում ջերմ և հոգենորդ հորդորով ներկաներիս իր հայրապետական մայթանքն ուղղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Նայոց Կաթողիկոսը.

«Միրելի Սրբազն Նայրեր, հոգնոր եղբայրներ, հոգնոր սպասավորներ, գեղագոյն Տոգնոր Խորհրդի աշխարհական պատվարժան անդամներ, հարգարժան դասախուսներ, սիրելի պաշտոններյուն և շատ սիրելի սաներ:

Առաջին զգացումն առ Աստված գոհաքանական զգացումն է, երբ հրաժեշտ ենք դաշին 2002 թվականին, մենք փառք և գոհություն ենք առ Աստված բարձրացնում, որ Իր հոգածության ներք շնորհեց մեզ այս պարզը, խաղաղ կյանքի պայմաններում անցկացնել ևս մեկ դարի, որպես Եկեղեցի, որպես ազգ և հայրենիք:

Ես փառք եմ դաշին Աստծուն այս երեկոյի համար նաև, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ընդունիքն ի մի է բերել, ամբողջական, գոհության զգացումով, լավ դրամադրությամբ դիմավորելու նոր դարին:

Ուրախ եմ, որ այս սեղանի շուրջ են մեր թեմակալ առաջնորդները, միաքանչեղեցականները, որոնք զանազան թեմերում իրենց ծառայությունն են մարդուցում, մեր Վիրահայոց թեմի առաջնորդական դեղապահը, Սկյուռից՝ Միացյալ Նահանգներում սպասավորող Եկեղեցական Նայր Օշականը, նաև քոյր Եկեղեցի-

ներից ներկայացուցիչներ, որ խորհրդանշական է դարձնում այս երեկոյի մեր ավանդական սիրո սեղանը: Կայովիկ Եկեղեցոց մեր հոգևոր եղբայրը, որ այս դեռ է ուսանում է հայոց լեզու, ծանրանում, խորամուր լինում մեր եկեղեցական կարգաց, նոր ավանդությանց մեջ, ինչպես նաև Ավետարանական Եկեղեցու ներկայացուցիչ Տայր Մայքլը, որ տարիներ ի վեր հասրապված է այսինք, նաև իր ծառայությունն է մակրոցում Գևորգյան և Վազգենյան հոգևոր կրթօջախներում, դասընթացներ անցկացնում մեր սանոց հետ:

Ուրախ են, որ մեզ հետ են Մայր Աթոռի պաշտոններթյունը, որոնց շարքում Սփյուռքից՝ Միացյալ Նահանգներից կամավորաբար եկած և իրենց օգտակար ծառայությունը մեզ մասնաւոր գեր և պիկին Արմեն և Փոլս Դեեցյանները: Եվ, վերջապես, ես ցանկանում եմ ուրախությունն հայրնեկ, որ Գևորգյան ճեմարանի դեսուց Տեր Տայրն իր աշխարհակիցների հետ միասին գեղեցիկ կերպով կազմակերպել է Տարեւուսի այս երեկոն: Մեր գնահարանքը, մեր օրինավերթընը մեր սիրելի Տեր Տորը:

Ելույթ ունեցողներն անդրադարձան եկեղեցական մեր կյանքից ներս անցնող դրաբնական ձևորդներումներին: Մեր ծառայությունն ուղղված է մեր ժողովրդին, որով այս մի փոքրիկ մասնիկ է մարդկության ծառայության ծիրից ներս: Մենք մեր բաժնուկ փորձում ենք մեր ծառայությունը մարտունել, փորձում ենք մեր առաքելությունը կարարել մեր ժողովրդի զավակաց հանդեպ՝ առաջնորդել դեպ Աստված, ցոյց տրամադրել անապարհը: Եվ երբ նայում ենք, անդրադարձնում մեր կյանքում գեղ գրած իրադարձություններին, տեսնում ենք, որ տակավին շար անելիքներ ունենք որպես Եկեղեցի, որպես Եկեղեցու սպասավոր, որպես Տիրոջ ազգու մշակ:

Տեսնում ենք, որ մեր ընկույնիքի մեջ տարրեր նկարագրի, հոգերանության, աշխարհոնկալումի տեղը անդամներ կան. ունանք անառակ որդիներ են, ունանք՝ չարամմի, ունանք՝ մեղապարդ, ունանք՝ աշխատասեր, խոնարի, պարտաճանաչ բարի զավակներ: Եվ որպես ծնող պետք է որ մեր հոգածության ներքո պահենք բոլորին անխպիր: Ոչ մի ծնող երես ցի թեքում իր մեղավոր զավակից, և մեր առաքելությունն է՝ հոգարար ծնողի սիրով գորգուրել և ճիշդ ճանապարհի վոր բերել մեր զավակաց, որոնք որ շեղված են դեպի Աստված ընթացող ճանապարհից, մեր հայրերի ուղեգծած ճանապարհից:

Ճանապարհ, որ մեր ինքնությունն է ընորոշում որպես հայ ժողովրդի զավակ, որ մեր նկարագրին է ընորոշում որպես ազգ և ժողովուրդ: Եվ մեր Եկեղեցու առաքելությունը որքան էլ որ արդյունավելի է եղել 2002 թվականին, այդուհանդերձ ես կարծում եմ միանշանակ, որ անելիքները շար են տակավին մեր սոցն, մեր տան ներքին բարեկարգությունց սկսյալ՝ ազգի ծառայության ընդարձակ դաշտը ներտայալ: Բայց գոհություն և փառք պետք է բարձրացնենք դեպի Աստված, որ անցնող դրանուն նվիրումով ու ժրաշանությամբ աշխարեցին մեր բոլոր սպասավորները: Ակնհայտ է, որ և հնչաց մեր հարգարժան պրոֆեսոր Պողոս Խաչարյանի խոսքում, թե նշանարելի է աշխատությունը Եկեղեցում, կա շարժ,

դա շնորհիվ Դայագրանի մեր թեսակալ առաջնորդների է, նրանց իշխանության ներք գործող հոգեոր սպասավորների:

Դուս ունեմ, որ այդ աշխատանքներն առավել պիտի կազմակերպվեն առաջիկա տարիներին և արդյունքները մեզ ամենքիս համար ավելի ուշաբար պիտի լինեն, որովհետ մեր Եկեղեցին պիտի դեռնենք հասպատված մեր ժողովրդի կյանքում, պիտի դեռնենք հավատքը մեր ժողովրդի կյանքի մաս դարձած և պիտի դեռնենք այդ աղոթքի արդյունքում օրինություն է իշնում մեր ժողովրդի վրա և ժամանակը, հոգու բերկրանքն ու ցնծությունը առավել դեղ են զրադեցնում մեր կյանքից ներս:

Ես չեմ ուզում անդրադառնալ այն ամենին, ինչ որ անցնող տարրում կարարվեց: Վյապես կամ այնպես ամենքը գեղյակ եք թե ինչպես աշխատեցինք բոլոր, ինչ ձեռքբերումներ ունեցանք, որունք թերացանք, որ լրացրացանք, ինչ չափով վրիպումներ ունեցանք և անհաջորդություններ մեր կյանքում: Ես կուգես այսօր, իս հայոցը ուղղաց 2003 թվականին, առավել չափով անդրադառնալ այս տարվա մեր անելիքներին, որ հայկանշված է Սայր աթոռ Ս. Էջմիածնի օծնան 1700-ամյա տարինարձով: Եվ նախախնամական է թերևն, որ հորելյանական դարիներ են իրարու հաջորդում, որոնք որ մեզ խանդավառում են, գորեապնդում են, մոռու ավելի խնամքով ծրագրելու մեր հետագա աշխատանքը:

Ինձ համար հոգեկան միխթարություն է և մեծ բավականություն, երբ մփածում եմ, որ առաջիկա տարրում արդեն առաջին ծիծեռները պիտի են գան, միաբաններ Ս. Էջմիածնի, որոնք տարիներ առաջ մեկնել են ուսման, բարեհաջող կերպով ավարտին են հասնում իրենց ուսումն արդրասահմանյան ասլվածարտնական համալրաներում, և գալու են համալրելու մեր շարքերը և նոր ոգով, գիտելիքների ընդլայնված պաշարով իրենց օգտակարությունը բերելու այսպես մեզ և մեր ժողովրդի զավակաց սպասավորությանը:

Ուրախություն և բերկրանք են իմ հոգուն հավելուն նաև, երբ մղածում եմ, որ առաջիկա տարիներին մեծ թվով եկեղեցականներ պիտի ունենանք մեր Եկեղեցուց ներս՝ նորիկ այն դասընթացների, որ այսօր ընթանում են Երևանում. նկատի ունեն քահանայից պատրիարքության դասընթացները: Մոտ 25 շնորհակի, խոսքումնալից երիտրասարդներ ունենք այնքան, որոնք որ համալրանական կրթությամբ, ներքին համոզումով, հավատքի մողումով եկել են իրենց կյանքի ընթացքը շարունակելու այլևս եկեղեցուց ներս, որպես եկեղեցական՝ իրենց սպասավորությունը բերելու մեր ժողովրդին:

Ինձ համար շատ գորեապնդող է, որ մեր բարեկար զավակունք զորավիճ են Սայր Աթոռ Ս. Էջմիածնին, հավատում են Ս. Էջմիածնի առաքելությանը, որդեգրած ընթացքին և սադար են կանգնում և ամեն կերպ աջակցում, որպեսզի մենք կարողանանք ավելիով արդյունքներ արձանագրեն, որովհետ այդ արդյունքները կարձացնում են այն ճանապարհը, որ մեր Եկեղեցու ամբողջությունը, լիարժեքությունն է կազմում:

Ես պարզը եմ զգում իմ խոճի առօս այս պահին երկինք աղոթք բարձրացնել բարեւար մեր հայորդիների համար, որոնք որ հաջողությունների մեջ հիմնական մաս և բաժին ունեն:

Խոսք շատ բարդի երկարեւ, ինչպիս ասածի: Առաջիկա դարին U. Էջմիածնի օծնան 1700-ամյակն է, և սա առավել պարտավորությունների տակ է դնում մեզ ամենքի, որպեսզի յուրաքանչյուր մեր հերթին կարողանանք լարեւ մեր ուժերը, որովհետո այդ ուժերն անբավարար են, այդ ուժերը պետք է եռապարկեն, որ կարողանանք ինչ-որ չափով գոհացնել ժամանակավորապես, արժանապես գոնեւ այն անհրաժեշտ կարիքները լրացնել, որ այսօր ունի մեր Եկեղեցին մեր ազգի, մեր հայրենիքի նկարումամբ:

Եհմ կարող չանդրադառնաւ, որ շատ վճռական են մեր առաջիկա նախազահական և խորհրդարանական ընդունությունները, և օրեւ առաջ տեղի ունեցած ողբերգական սպանությունը զալիս է զգոնության կողմեւ, որպեսզի մեր լինենք մեր դիրքերում, հոգնոր ստացնորդի դիրքերում, ամենքս մեր տեղում՝ հոգնոր հովիկ, թեմակալ առաջնորդ և Կաթողիկոս: Որպեսզի կարողանանք ճիշդ ուղով առաջնորդեն, որ յուրաքանչյուր հայորդի հաշվեկու լինի իր յուրաքանչյուր քայլին: Ես իմ աղոթքն եմ առ Աստված բարձրացնում, որպեսզի Տերը զորացնի այս առաջեւության մեջ, որ մեր կոչման առաջեւությունն է և մեր ընթացքն է:

Առավել չափով մեր հոյսը նոր հասնող սերունդն է, որ այսօր, որպես հոգնոր կրթական հասկարությանց սաներ, իրենց ուսումն են առնում մեր դասախոսների, մանկավարժների հոգածու խնամքի ներքո, նրանցից սպանում անհրաժեշտ գիրելիքներ:

Ես իմ զնահարանքն եմ փոխանցում ձեզ ամենքիդ ձեր կարգարած ծառայությանց համար, ձեր բերած ազնիվ աշխատանքի համար, որով շնունդում է Տայ Առաքելական մեր Եկեղեցին և զորակում է իր առաքելության մեջ: Ամենքիդ անխրիդ՝ Գերագոյն Շոգնոր Խորհրդի անդամներին, մեր սիրելի դասախոսներին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոններյանը, մեր թեմակալ առաջնորդներին և միարաններին: Մեր զնահարանքի խոսքը վերսպին Ծեմարանի տեսչությանը, որ հոգածությամբ, նախանձահմենությամբ, հետքնողականորեն առաջ են դանում կրթական գործը Գնորզյան Շոգնոր Ծեմարանում, ինչպես նաև Սեանի Վազգենյան Դպրանցում և Գյումրիի Ընծայարանում:

Աղոթք եմ առ Աստված բարձրացնում՝ հայցելով, որ Տերը խաղաղության մեջ պահի աշխարհը հաւայն, անվրությ պահի մեր Հայաստան երկիրը և մեր ժողովուրդն ի սկիզբու աշխարհի: Թող Տերը զորացնի եղբայրությունն ազգերի և Եկեղեցների միջն, և յուրաքանչյուր հարակորդն տեսնենք մեր կյանքի առաքելությունն ու նաև տեսնենք այդ առաջեւության մեջ մեր տեղն ու դերը և անսակարկ նվիրությունը լօվենք մեր պարտականությանց կարարւանը, որ դրված է յուրաքանչյուրի ուսերին Երկնային կողմից:

Ուրեմն, ուրահի պրամադրությամբ սկսեցինք հրաժեշտի արարողությունն 2002 թվականի, և այդ ուրախությունը թող դառնա ոգի, թող դառնա ներշնչանք ուժ և կարողություն նոր՝ 2003 թվականը ձեռքբերումների դարի դարձնելու:

Թող Տիրոջ Աջը և բարի աջքը մեզ բոլորիս վրա լինի, և նրա օրինության մեջ մենք զորացած շենացնենք մեր երկիրը, զորացնենք ու երջանկացնենք, բարօր դարձնենք մեր ժողովրդի կյանքը և պայծառացնենք մեր Սուրբ Եկեղեցին: Տիրը մեզ օգնական մեր դժվարին, բայց քաղցր ծառայության մեջ»:

Հանդիսությունն ավարտվեց Տերունական աղոթքով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

ԳԵՎՈՐԳ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱԿԱՐՅԱՆ